**Ծրագիր՝ ‹‹ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ››**
**Վարկ No. 8495-AM, Պայմանագիր No. ETNIP_YTPP_CS_1/2015**

**Առարկա՝ Շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկման լիցենզիա**

Հարգելի՛ պարոնայք,

Պայմանագրի ներքոստորագրյալ Սեփականատերը և CESI SpA-ի (հիմնադրված՝ համաձայն Իտալիայի օրենքի, հիմնական գործունեության վայրը՝ Միլան, Վիա Ռուբատինո 54, Իտալիա) վաճառքի և մարկետինգի գծով տնօրենը սույնով հաստատում և ներկայացնում է ձեզ շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկման լիցենզիան Իտալիայում:

ETNIP_YTPP_CS_1/2015 պայմանագրի շրջանակներում, որը ստորագրվել է ‹‹Երևանի ՋԷԿ›› ՓԲԸ և CESI-INCICO ՀՁ կողմից, նշված ՀՁ-ի գործունեությունը կիրականացվի միջազգային և տեղական մասնագետների կողմից՝ համաձայն նշված պայմանագրի Հավելված C-ի:

Մասնավորաբար, շինարարության գծով մասնագետների համար CESI-INCICO ՀՁ-ն կիրականացնի գործունեություն իտալացի պրոֆեսիոնալ ինժեներ-շինարարի (Ալեսանդրո Բերտինո) և հայ պրոֆեսիոնալ ինժեներ-շինարարի ներգրավմամբ:

Ելնելով շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկման համար CESI-ի լիցենզիայի ներկայացման պահանջից՝ պետք է ընդգծել, որ իտալական նորմերը ընկերությունների համար չեն նախատեսում այդպիսի լիցենզիա, սակայն այդպիսի լիցենզիա պետք է ձեռք բերեն անհատ ինժեներները, որոնք վարձվել են համապատասխան ընկերությունների կողմից որպես պրոֆեսիոնալ ինժեներ գրանցվելու և ծրագրեր, փորձարկումներ և հաշվետվություններ ստորագրելու պատշաճ իրավունք ունենալու համար, որոնք կարող են համարվել վավերական՝ համաձայն Իտալիայի օրենքի:

Այնքանով, որքանով առնչվում է ընկերությունների պահանջներին, ծառայությունների համապատասխան ոլորտը պետք է հստակ նշվի առևտրի պալատի շրջանակներում ընկերության գրանցման հավաստագրում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ մենք հաստատում ենք, որ մեր ինժեները՝ պարոն Ալեսանդրո Բերտինոն, ամբողջովին իրավասու է իրականացնել այդպիսի աշխատանքներ CESI-INCICO ՀՁ-ի անունից՝ համաձայն Իտալիայի նորմերի:

Ինչ վերաբերում է այն աշխատանքներին, որոնք պետք է իրականացվեն տեղական ինժեներ Գարրի Առաքելյանի կողմից, պետք է ընդգծել, որ նա կգործի պայմանագրի շրջանակներում CESI-ի ենթակապալառուի (ԱՄԵՐԻԱ ընկերություն) հետ:

Խնդրո առարկա ծրագրի համար, ըստ ինժեներ-շինարարների, որոնք պետք է ներառվեն, CESI-INCICO ՀՁ-ն կտրամադրի՝

- Իտալացի պրոֆեսիոնալ ինժեներ պարոն Ալեսանդրո Բերտինոյի պատշաճ կերպով թարգմանված լիցենզիան ապոստիլով:

- CESI-ի գրանցման հավաստագիրը, որը հավաստիացնում է, որ CESI-ի գործունեության շրջանակներում ներառված են նաև շինարարական աշխատանքների նախագծումը և վերահսկումը՝ պատշաճ կերպով թարգմանված ապոստիլով:

- Ամերիայի լիցենզիան՝ որպես տեղական ընկերություն, որը պատշաճ կերպով իրավասու է մատուցել ծառայություններ՝ կապված շինարարական և վերահսկման աշխատանքների հետ:

Ելնելով վերոնշյալից՝ մենք հավատացած ենք, որ առկա են բոլոր տարրերը, որոնք ցույց են տալիս աշխատանքներ իրականացնելու CESI-ի լիարժեք համապատասխանությունը՝ ըստ պայմանագրի պահանջների:

Մենք հավատացած ենք, որ վերոնշյալը կպարզաբանի ձեր կասկածները:

Հարգանքով,

Անդրեա Մեոլա